ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսումնառությանը նպաստող ձևավորող գնահատման ձևերը տարրական դպրոցի դասագործընթացում

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Բալասանյան Մելինե Վազգենի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն..……..……..…….…3
2. Գնահատման ժամանակակից մոտեցումներ…….…….……5
3. Գնահատման տեսակները……. 7
4. Ուսումնառությանը նպաստող ձևավորող գնահատման ձևերը տարրական դպրոցի
դասագործընթացում……..……10
5. Եզրակացություններ…….…… 19
6. Օգտագործած գրականության ցանկ……...20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտելիքը հզոր ուժ է, որը միշտ էլ օգնում է ավելի ճիշտ ապրել՝ հարստացնելով մարդու միտքն ու հոգին: Կրթված մարդն, այնուամենայնիվ, գտնում է իր ճիշտ տեղն ու դիրքը՝ արժանանալով շրջապատի ուշադրությանն ու համակրանքին: Ճիշտ է ասված այն միտքը, որ մարդը ստեղծված է այն գրքերից, որոնք կարդացել է: Հետևաբար, պետք է շարունակ լցնել ու հարստացնել գիտելիքների պաշարը՝ ձգտելով ինքնազարգացման և հոգու կատարելության:

«Գնահատում» բառը կրթական համատեքստում լայն հասկացություն է, այն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:

Գնահատում ենք սովորողների գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումը, արժեքները: Գնահատականը պետք է ուսուցչին, ծնողին, աշակերտին, պարզապես պետք է ճիշտ վերաբերմունք ունենալ, այն դիտարկենք թվանշան, որը պետք է կարգավորի ուսուցման գործընթացը: Գնահատման բազմաթիվ տեսակներ են հայտնի, որոնցից լայն տարածում գտել են միավորային և ուսուցանող (ձևավորող) ձևերը:

Կրթական բարեփոխումների ներկա փուլում կարևոր տեղ է տրվում գնահատման համակարգի արմատական բարեփոխմանը: Առավել արդիական է դառնում գնահատումն օգտագործել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման, այլ նաև որպես ուսուցումը բարելավելու միջոց: Հետևաբար, **ավարտական շխատանքի թեման արդիական է,** քանի որ ուսումնառությանը նպաստող գնահատման կանոնակարգված ներդրումը գնահատման մյուս ձևերին զուգընթաց կնպաստի դպրոցներում դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Դրանից հատկապես մեծ օգուտ կունենան ցածր առաջադիմությամբ սովորողները, իսկ առաջավոր սովորողները առավել կխորացնեն իրենց գիտելիքները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, վերլուծել ուսուցմանը նպաստող գնահատման համակարգը (ՈՒՆԳ) տարրական դպրոցում, բացահայտել այդպիսի գնահատմանն առաջարկվող նոր մոդելներ ու ժամանակակից ձևեր:

Հետազոտության հիմնական խնդիրներն են՝

- ✓ Ավարտական աշխատանքի թեմայի վերաբերյալ եղած մեթոդական գրականության ուսումնասիրում:
- ✓ Միավորային և ուսուցանվող գնահատման միջև տարբերությունների, առանձնահատկությունների դիտարկում:
- ✓ Ուսուցման գործընթացում ձևավորող գնահատման կարևորության և առավելության վերլուծում:

Ուսումնասիրվող **թեմայի գործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ ուսումնառությանը նպաստող գնահատման ձևերը տարրական դպրոցի դասագործընթացում բացահայտելով՝ հնարավորություն կընձեռվի ուսուցչին՝ պարզելու ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները, և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, խմբի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

«Գնահատում» բառը կրթական համատեքստում լայն հասկացություն է, այն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է, նրա շնորհիվ պարզվում է յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Գնահատումը գործընթաց է, որի շնորհիվ մենք ստանում ենք սովորողի մասին տեղեկություն, նրա առաջընթացի մասին տեղեկություն հավաքելով, վերլուծելով հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքները կարող ենք վերահսկել և ամփոփել:

Գնահատման հիմնական նպատակն է ստուգել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման և յուրացման մակարդակը, նրանց անձնային որակները, ապահովել արժեքային որակների ձևավորումը և դրանց հիման վրա ապահովել ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ուսման որակի բացահայտումը, բարելավումը և վերահսկում, խթանելու սովորելու ձգտումը, բարելավելու կրթության որակը, ինչպես նաև նպաստում է սովորողի ինքնահաստատմանը, ինքնազարգացմանը:

Սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, չափորոշիչների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելիս գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղղորդումը և խորհրդատվությունը, կրթական հնարավորությունների բացահայտումը, սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը,

լաբորատոր և այլ գործնական նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները:

Ու՞մ է պետք գնահատականը և ինչի՞ն պետք է ծառայի գնահատումը

Աշակերտի համար գնահատականը պետք է խրախուսի, արձանագրի աճը, տարբերակի ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: **Երբե՛ք** սովորողին ուղղված գնահատականը չպետք է վերաբերի նրա անձին, այլ կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին: Եթե սովորողը խնդիր չի կարողանում լուծել, դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին:

Ուսուցչի համար սովորողի գնահատականը պետք է լինի աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու, սովորողի թույլ և ուժեղ կողմերը արձանագրելու և դրա շուրջ աշխատանք տանելու միջոց:

Ծնողի համար այն պետք է երեխայի առաջընթացն արձանագրելու, ավելի ճիշտ ուսուցումը կազմակերպելու, ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց հանդիսանա:

Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց համար (մանկավարժական անձնակազմ և այլն) գնահատականը պետք է լինի ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, երեխայի մասին ավելի խորը տեղեկություններ ունենալու միջոց լինի:

Ի՞նչն ենք գնահատում/

Գնահատում ենք սովորողների

- Գիտելիքները
- Հմտությունները
- Դիրքորոշումը
- Արժեքները[1]

[1] Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Կիրառական ուղեցույց, Հատոր 3, 165 էջ, https://rm.coe.int/arm-reference-framework-vol-3/1680a1b758/30/12/2017

Ե՞րբ ենք գնահատում.

Ըստ ուսումնական գործընթացի նպատակի կիրառվում է.

-**նախնական գնահատում՝** բացահայտվում է սովորողների պատրաստվածության աստիճանը, որն էլ օգնում է պլանավորել ուսոցման հետագա գործընթացը

-**ընթացիկ գնահատում՝** ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը

-**ամփոփիչ գնահատում՝** ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի առարկայի յուրացման աստիճանը

-**պարտադիր ամփոփիչ գնահատում՝** ստուգվում են հիմնական և միջնակարգ դպրոցի շրջանավարտի ուսումնական գործունեության արդյունքները:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումները դպրոցում կիրառվում են նաև սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որակավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայտնի են գնահատման բազմաթիվ տեսակներ: Բայց ավելի լայն կծանոթանանք գնահատման միավորային և ուսուցանող ձևերին: Արդիական են նաև գնահատման մի քանի տեսակներ, որոնք պիտանի կլինեն ուսուցչին գնահատման գործընթացում:

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝

ա) **ուսուցանող գնահատում**, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով կամ մեկնաբանություններով,

բ) **միավորային գնահատում**, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը

գրանցելու-հաշվառելու միջոցով:

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ:ՈՒսուցանող գնահատումը իրականացվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ:

Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է , որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:

Ուսումնառության ընթացքում սովորողների ձեռքբերումների մակարդակը տարիներ շարունակ արտահայտվել է թվանշանով՝ համաձայն առարկայական չափորոշչի:

Միավորային գնահատման **տեսակներից են.**

1. բանավոր հարցում
2. գործնական աշխատանք
3. թեմատիկ աշխատանք

Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է:

Ուսուցանող գնահատման ձևերն ու միջոցներն են՝

- բանավոր հարցում
- ինքնուրույն աշխատանք
- փոխադարձ գնահատում
- տնային աշխատանք
- համագործակցություն
- մեթոդների կիրառում
- նախագիծ
- ռեֆերատների ստեղծում

- հարցերով քննարկում
- թեստեր
- զրույց

Գնահատումը սովորողի առաջադիմության փաստագրումն է, այն նաև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

ՈՒսուցանող և միավորային գնահատումների բնութագրիչ առանձնահատկություններ

Միավորային գնահատումն իրագործվում է ուսումնական նյութի որոշակի միավորի դասավանդման և ուսումնառության վերջում, որը վավերացնում է միայն աշակերտի առաջադիմությունը: Ի տարբերություն դրա՝ ուսուցանող գնահատումը կատարվում է դասավանդման և ուսուցման ընթացքում՝ աշակերտի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու նպատակով: Դրան հետևում են դասավանդման մեթոդների և ուսման բարելավմանը միտված աշխատանքները: Ուսուցանող և միավորային գնահատումները տարբերվում են նաև իրենց իրագործման մեթոդներով: Միավորային գնահատումն իրագործվում է բանավոր կամ գրավոր ստուգումների, գործնական աշխատանքների և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների արդյունքների գնահատման միջոցով: Ուսուցանող գնահատումն իրագործվում է դասարանական հարցումներով, զույգերով կամ խմբային քննարկումներով, աշակերտների հետ հարցազրույցներով, հանրամատչելի վիկտորինաներով ու գլուխկոտրուկներով, հայտորոշիչ թեստերով ու դրանց պատասխանների վերլուծություններով, ինչպես նաև վերը նշված մյուս ձևերով:

Միավորային գնահատման կարևոր առանձնահատկություններից են արդյունքների վերջնական լինելը, առաջադրանքների տարբեր բարդությունը, ոչ հաճախ անցկացումը, հարցերի փակ բնույթը և վերևից ներքև իրագործման կարգը: Ուսուցանող գնահատման աշխատանքներն անընդհատ են, առաջադրանքներն՝ ավելի թեթև, հարցերը՝ բաց, հարցումները՝ հաճախակի, իսկ աշխատանքների ընթացքը՝ մասնակցային:

Գնահատումների երկու ձևերն էլ վերահսկելի են: Մանկավարժական հմտությամբ՝ այդ երկու գնահատումները պետք է համադրել այնպես, որ դրանք նպաստեն աշակերտի առաջընթացին:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաջընթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքին զուգակցվող որակական աշխատանքներն են: Ուսուցանող գնահատման նպատակն է ճշգրտել դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, դասավանդման արդյունավետ մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը, և դրանց օգնությամբ բարելավել ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև սովորողին ըմբռնելի դարձնել ուսման նպատակները: Ուսուցանող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները, և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, խմբի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով: **Գնահատման այս ձևի առանձնահատկություններից է հետադարձ կապի առկայությունը:** Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում ծագած թերությունները շտկող գործողությունների: Այդ դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը: Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

Ուսուցանող գնահատման արդյունքների հիման վրա, հետադարձ կապով, ուսուցիչը գնահատում է պետական չափորոշիչների, դասավանդման ծրագրերի և մեթոդների արդյունավետությունը, կատարում իրավիճակից բխող փոփոխություններ:

Հետադարձ կապն ունեցած տեղեկատվության հիման վրա վիճակի բարելավման անընդհատ գործընթաց է: Դա նաև տեղեկատվություն է արվող աշխատանքների վրա դրվող ջանքերի ու առաջադրվող լուծումների ուղիների բարելավման մասին: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գործնական կամ գրավոր աշխատանքների՝ ներառյալ միավորային գնահատման արդյունքների քննարկումն ուսուցանող նպատակով: Դրա հիմքում գլխավորապես ուսուցչի անդրադարձն է սովորողի կատարած աշխատանքին: Հետադարձ կապի ամբողջականության համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև սովորողների միջև փոխադարձ գնահատումները, ինչպես նաև սովորողի ինքնարժևորումը: Հետադարձ կապն առավել օգտակար է այն դեպքում, երբ այն միտված է առաջադրանքի բուն ուսումնական նպատակին, քան այլ հանգամանքների: Երբեմն ուսուցիչն ավելի շատ հետևում է երկրորդական հանգամանքներին:

Օրինակ՝

- աշխատանքի ներկայացման ձևը,
- գրելաձևի հմտությունը,
- արված աշխատանքի ծավալը,
- ցուցաբերած ջանասիրությունը և նման այլ հանգամանքներ:

Եթե, օրինակ՝ «մայրենի» ուսումնական առարկայի ուսուցանվող նյութը քերականական չէ, ապա տվյալ նյութի յուրացումն ստուգելիս չարժե մեծ արժեք տալ նույնիսկ տառասխալներին:

Ուսուցանող գնահատման կանոնակարգված ներդրումը գնահատման մյուս ձևերին զուգընթաց կնպաստի դպրոցներում դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Դրանից հատկապես մեծ օգուտ կունենան ցածր առաջադիմությամբ սովորողները, իսկ առաջավոր սովորողները առավել կխորացնեն իրենց գիտելիքները:

Ուսուցանող գնահատման դեպքում օգտագործվում է ոչ թե թվանշանային կամ այլ նիշային գնահատումը, այլ սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ և մեկնաբանություններ: Ի վերջո, նշենք, որ ուսուցանող գնահատումը ձեռքբերումների և հնարավորությունների առկա և ցանկալի վիճակների միջև եղած ճեղքվածքի վրա

ուշադրության սևեռումն է: Լինելով ֆորմատիվ՝ ձևավորող, տեղեկությունների հավաքումը պետք է օգտագործվի սովորեցնելն ու սովորելը սովորողի կարիքների բավարարմանը հարմարեցնելու նպատակով: **Ուսուցանող և ձևավորող եզրույթները հաճախ գործածվում են որպես հոմանիշներ:** Խիստ ասած՝ ուսուցանող գնահատումն ընդհանուր տերմին է, որն օգտագործվում է գնահատման գործադրումը նկարագրելու համար: Ուսուցանող գնահատման էությունը հնարավոր բոլոր ձևերով սովորելուն աջակցելն է: Ֆորմատիվ (ձևավորող) գնահատումն ուսուցանող գնահատման ենթամաս է, որի բնութագիրն ուսումնական նյութը յուրացնելու ընթացքում սովորողի թույլ տված թերըմբռնումներն ու սխալները հայտնաբերելը և դրանք վերացնելն է: Սովորողների առաջընթացը բացահայտող ստուգման որոշ ձևեր կարելի է օգտագործել թե՛թվանշանային գնահատման, թե՛ ուսուցանող գնահատման նպատակով: Ուսուցանող գնահատման իրականացման նպատակով կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ ձևերն ու տարատեսակները՝

- կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք,
- բանավոր հարցում,
- տնային առաջադրանք,
- խմբային աշխատանք, համագործակցություն, նախագիծ,
- ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք,
- բաց հարցերով քննարկում,
- ինքնագնահատում,
- փոխադարձ գնահատում,
- գործնական աշխատանք, կիրառություններ,
- ռեֆերատ:

Արդյունավետ ուսուցումը կարելի է իրագործել միայն այն դեպքում, երբ սովորողին պարզ լինի, թե ինքն **ինչ գիտի**, հասկանա, թե ուսումնական տվյալ փուլի վերջում **ինչ պետք է իմանա** և սկզբում կարողանա անել այդ աշխատանքի մի մասը, հասկանա առաջադրանքի բուն իմաստը և ուսումնական նյութի ուսուցման ավարտին ի վիճակի լինի կատարելու ամբողջ աշխատանքը: Արդյունավետ ուսուցման համար խիստ կարևոր է սովորողներին քաջատեղյակ դարձնել ուսուցման նպատակներին,

հստակ ներկայացնել դրանց հասնելու քայլերը: Եթե ուսուցանվող թեմայի շրջանակներում սովորողն առաջարկում է նպատակին միտված ինչ-որ հարցի մեկնաբանում, ապա ուսուցիչը պետք է խրախուսի նման նախաձեռնությունը և այն քննարկի: Ուսուցանող աշխատանքների հաջողության համար, ուսուցիչը պետք է կարողանա սովորողի մեջ արթնացնել դրանք կատարելու ցանկություն: Պակաս կարևոր չէ նաև սովորողի գիտակցությանը հասու դարձնել, որ իր ուսումնական ձեռքբերումների համար ինքն էլ է պատասխանատու: Այդ ճիգերը կհամարվեն հաջողված, եթե սովորողի մոտ առաջանան հետևյալ հարցերը.

● ո՞րն է իմ ուսումնական մոտակա նպատակը,

● այդ նպատակին հասնելու ճանապարհին ի՞նչ ձեռքբերումներ ունեմ,

● այդ նպատակն իրականացնելու համար ի՞նչ պետք է անեմ:

Իսկ ինչպե՞ս կարելի է կազմակերպել ուսուցման գործընթացը առանց միավորային գնահատման:

Հայտնի է, որ հանրակրթական դպրոցի առաջին դասարանում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով՝ ըստ հաստատված ձևի, յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է կրթական զարգացման բնութագիր, որտեղ երևում է սովորողի ձեռքբերումները բոլոր առարկաներից:

Միավորային գնահատումը հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվում է սկսած երկրորդ դասարանից:

Բայց ինչպե՞ս ենք պատկերացնում կրթությունը տարրական դասարաններում՝ առանց միավորային գնահատման:

Ըստ այդմ, ուսումնական նյութից սովորողի ուսումնական ձեռքբերումներն ու առաջընթացը ներկայացնելու համար ուսուցիչը կարող է կիրառել գնահատման այլ ձևեր.

բանավոր և գրավոր խրախուսում, խրախուսման մի շարք այլ ձևեր:

Գնահատման մոտեցումներն ընտրելիս պետք է հաշվի առնվեն բազմաթիվ խնդիրներ: Ընտրությունը կատարելիս պետք է դիտարկվեն արժեքների, վերաբերմունքների, հմտությունների, գիտելիքի և քննադատական ընկալման

գնահատմանն առնչվող տարբեր հարցեր։ Այն ինչ հարմար է կարողունակությունների մի շարքի համար, հնարավոր է, հարմար չլինի մյուսի համար։ Բացի այդ, գնահատման բոլոր մեթոդները պետք է լինեն վավեր, հուսալի, արդար, թափանցիկ, գործնական և գնահատվող սովորողի արժանապատվության և իրավունքների նկատմամբ հարգալից։ Հանրակրթական ուսումնական հաստատությունում գնահատման ժամանակակից ձևերն են՝ քանակական (միավորային), ձևավորող (ուսուցանող)։

Ձևավորող գնահատման 9 հնար

«Ջերմաչափում»: Այս մեթոդը նպատակ ունի բացահայտելու, թե սովորողները որքանով են ճիշտ կատարում հանձնարարությունը։ Աշխատանք կատարելու ընթացքում մի պահ դադար է տրվում. ուսուցիչը հարցնում է. «Ի՞նչի վրա էիք աշխատում»։ Յուրաքանչյուր սովորող ներկայացնում է այն աշխատանքը, ինչը ինքը մինչ այդ պահը կատարել է։ Պարզ է դառնում, թե սովորողները որքանով են հասկացել հանձնարարությունը կամ դրա կատարման ընթացքը։ Զույգերով կամ խմբերով աշխատելու պարագայում ուսուցիչը դիմում է որևէ զույգի կամ խմբի՝ ասելով, որ ցուցադրեն իրենց աշխատանքի ընթացքը։ Մյուս զույգերը կամ խմբերը դիտում են և հասկանում, թե իրենցից ինչ է պահանջվում կատարել։ Այս մեթոդը շատ կարևոր է, քանի որ փորձը ցույց է տվել, որ սովորողների մեծ մասը առաջադրանքը կատարելիս դժվարություններ է ունենում ոչ թե այն պատճառով, որ թեման չգիտի, այլ չի հասկանում առաջադրանքի պահանջը, ուսուցչի հրահանգը կամ կատարման ընթացքը։ Խորհուրդ է տրվում հաճախակի կիրառել այս հնարը, որը ժամանակատար չէ և նպաստում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը։

«Հարցադարան»: Հարցադարանը ներառում է մի շարք հարցադրումներ, որոնք դասի ժամանակ ուղղվում են այս կամ այն սովորողին կամ սովորողների որոշակի խմբին և օգնում են ուսուցիչներին որոշել, թե որ գիտելիքը կամ հասկացությունը չյուրացվեց սովորողների կողմից։ Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-հոգանոց խմբերի։ Յուրաքանչյուր խմբի սեղանին դրվում է քարտ՝ հետևյալ հարցերով.

-Ի՞նչ նոր բան այսօր իմացաք։

-Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր։

-Ի՞նչն էր դժվար։

-Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞։

Վերջում, ուսումնասիրելով քարտերը, ուսուցիչը համապատասխան եզրահանգումներ է անում։

«Ադամանդների հիերարխիան»։ Սովորողները քարտի կամ կպչուն թղթերի վրա մշակում կամ նախապես գրի են առնում տվյալ դասի թեմայի շուրջ 9 գաղափար։ Սովորողները քարտերը դասավորում են վերևից ներքև ըստ կարևորության՝ հետևյալ սկզբունքով. 1-ին տողում ընտրում և փակցնում են 1 քարտ, 2-րդ տողում փակցնում են 2 քարտ, 3-րդ տողում՝ 3 քարտ, 4-րդ տողում՝ 2 քարտ և 5-րդ տողում՝ 1 քարտ։ Քարտերը ստանում են ադամանդի տեսք և դասավորվում ըստ գաղափարների առաջնահերթության։ Աշխատանքը կարող է իրականացվել անհատական, զույգով կամ խմբով [2]։

«Գիտելիքների բուրգ»։ Դասի ժամանակ՝ նոր նյութի համատեղ ուսումնասիրությունից հետո, ուսուցիչը սովորողներին առաջարկում է ստեղծել իրենց գիտելիքների և հմտությունների բուրգը, այսինքն՝ ինչ սովորեցին և ինչ կարող են անել դասի տվյալ փուլում։ Այդ նպատակով յուրաքանչյուր սովորող թղթի վրա պատկերում է բուրգ՝ ուսուցչի տված օրինակով, բուրգի ամեն մի հատվածում գրում է նախադասություններ, որոնց միջոցով արտահայտում է տվյալ թեմային վերաբերող իր գիտելիքները, օրինակ՝ դրանք կարող են լինել հետաքրքիր փաստեր, օգտակար տեղեկություններ, ինքնատիպ առաջադրանքներ, դրական հույզեր (տե՛ս նկ. 1)։



2. Ձևավորող գնահատման 9 h ot.com/p/9.html։

նկ.1 «Գիտելիքի բուրգ»:

Ապա այդ թղթերը կախում են դասարանի պատին: Բոլոր սովորողները հերթով մոտենում են թղթերին և կարդում գրածները: Վերջում անդրադառնում են գրված մտքերին, խմբավորում և ամփոփում:

«Խմբագրական խորհուրդ»: Շարադրության խմբագրման ժամանակ ուսուցիչը նախապես գրատախտակի վրա գրում է չափանիշները: Բոլոր սովորողները հանդես են գալիս որպես խմբագրողներ, իսկ սովորողներից մեկն իր ցանկությամբ գնում է գրատախտակի մոտ՝ ստանձնելով իր գրած շարադրության ներկայացնողի դերը: Խմբագրողներն ուշադիր լսում են գրավոր շարադրանքը և հենվելով գրատախտակի վրա նշված չափանիշների վրա՝ նշում են սովորողի աշխատանքի արժանիքները և առաջարկություններ են անում՝ շարադրության բովանդակությունը բարելավելու համար: Երբ սովորողը լսում է խմբագրողների առաջարկությունները, նստում է և ուղղումներ կատարում իր աշխատանքում: Սա սովորողներին շարադրություն գրելուն նախապատրաստելու շատ հարմար միջոց է:

«Արտաքին և ներքին շրջաններ»: Սովորողները կազմում են 2 շրջան՝ արտաքին և և ներքին, այնուհետև կանգնում են դեմ-դիմաց և ուսումնասիրվող թեմայից միմյանց հարցեր են ուղղում: Հարցերի պատասխանը ստանալուց հետո արտաքին շրջանի սովորողները տեղափոխվում են ժամսլաքի ուղղությամբ, կազմում նոր զույգեր և կրկին[3] միմյանց հարցեր ուղղում: Այդ ընթացքում ուսուցիչը դիտարկումներ է անում և նշում սովորողների թյուրընկալումներն ու դժվարությունները՝ հետագայում դրանց անդրադառնալու և շտկումներ կատարելու համար:

«Չորս անկյուններ»: Թեմայի քննարկումից առաջ ուսուցիչը դասարանի անկյուններում փակցնում է նախապես պատրաստված 4 ցուցանակներ.

Անկյուն 1. Լիովին համաձայն եմ:

3. Ձևավորող գնահատման 9 հնար, kznakgnahatum.blogspot.com/2021/11/9.html:

Անկյուն 2. Համաձայն եմ:

Անկյուն 3. Համաձայն չեմ:

Անկյուն 4. Բացարձակապես համաձայն չեմ:

Ուսուցիչը սովորողներին ասում է, որ թեմայի շրջանակում հնչեցնելու է պնդումներ կամ տեսակետներ: Լսելուն պես սովորողները ծանր ու թեթև են անում հնչեցված պնդման հանդեպ իրենց վերաբերմունքն ու տեղավորվում են դասարանի չորս անկյուններում՝ ըստ թեմայի կամ մտքերի նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքի: Այնուհետև ուսուցիչը հնչեցնում է մյուս պնդումը կամ տեսակետը, սովորողները կրկին լսում են և տեղավորվում են ըստ իրենց վերաբերմունքի համապատասխան անկյունում: Ուսուցիչը առաջարկում է քննարկել թեմայի շրջանակում հնչած տեսակետները, իսկ սովորողները հիմնավորում են իրենց ընտրությունը: Քննարկման արդյունքում նրանք կարող են փոխել անկյունը: Ցուցանակները կարող են պահվել կրկին այլ թեմաներում կիրառելու համար:

«Երեք բոպեանոց դադար»: Այս հնարքը սովորողներին հնարավորություն է տալիս կանգ առնելու, խորհելու նոր նյութին առնչվող մտքերի, հասկացությունների շուրջ: Դադարն օգնում է նոր նյութը կապել նախորդ նյութերից ստացած գիտելիքների և փորձառության հետ:

«Ելքի քարտեր»: Ելքի քարտերի միջոցով դասի ավարտին հավաքագրվում են սովորողների պատասխանները [4]:

Հիմնվելով պատասխանների վրա՝ ուսուցիչը կառուցում է հաջորդ դասը, որպեսզի առանձնացնի և անդրադառնա չյուրացված հասկացություններին, գաղափարներին: Ելքի քարտերի օրինակներ (տե՛ս նկ. 2):



Նկար 2. «Ելքի քարտեր»:

4. Գործնական աշխատանք (ՁԳ) տեսաձայնագրություն, https://kznakgnahatum.blogspot.com/2021/11/9.html:

Երբեմն դասի սկզբում, երբ ուսուցիչը ցանկանում է հասկանալ, թե ինչ են յուրացրել սովորողները նախորդ դասից, կիրառվում են մուտքի քարտեր: Մուտքի քարտերի օրինակներ (տե՛ս նկար 3):

1. Նշի՛ր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից:
2. Նշի՛ր 2 բան, որ կարևորում ես:
3. Նշի՛ր 1 բան, որին կուզենայիր այս դասին կրկին անդրադառնալ:

Նկ. 3. «Մուտքի քարտեր»

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում:

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում[5](տե՛ս նկ. 4.) :

Նկար 4. «ՈՒՆԳ բաղադրիչները»

5. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտելով ավարտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Ընթացիկ գնահատման նոր համակարգում շեշտադրվում են սովորողի հետ կատարվելիք կանոնակարգված ուսուցողական աշխատանքները, որոնց անվանում ենք ուսուցանող գնահատումներ կամ արժևորումներ: Այդ աշխատանքներն ունեն զուտ ուսուցանող բնույթ և կիրառվում են միավորային գնահատումների միջև ընկած ժամանակահատվածներում:
- Ուսուցանող և ձևավորող եզրույթները հաճախ գործածվում են որպես հոմանիշներ: Ուսուցանող գնահատումն ընդհանուր տերմին է, որն օգտագործվում է գնահատման գործադրումը նկարագրելու համար: Ուսուցանող գնահատման էությունը հնարավոր բոլոր ձևերով սովորելուն աջակցելն է: Ուսումնառությանը նպաստող (ձևավորող) գնահատումն (ՈՒՆԳ) ուսումնական նյութը յուրացնելու ընթացքում սովորողի թույլ տված թերըմբռնումներն ու սխալները հայտնաբերելը և դրանք վերացնելն է:
- ՈՒՆԳ-ն ժամանակ սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:
- ՈՒՆԳ ձևի առանձնահատկություններից է հետադարձ կապի առկայությունը: Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում ծագած թերությունները շտկող գործողությունների: Այդ դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը:
- **Ուսումնառությանը նպաստող գնահատման** կանոնակարգված ներդրումը գնահատման մյուս ձևերին զուգընթաց կնպաստի դպրոցներում դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Կիրառական ուղեցույց, Հատոր 3, 165 էջ, https://rm.coe.int/arm-reference-framework-vol-3/1680a1b758/30/12/2017:

2. Միքայելյան Օ. Ս., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Երևան, 2010, 81 էջ:
3. Ձևավորող գնահատման 9 հնար, https://kznakgnahatum.blogspot.com/p/9.html:
4. Գործնական աշխատանք (ՁԳ) տեսաձայնագրություն, https://kznakgnahatum.blogspot.com/2021/11/9.html:
5. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html: